Երկրորդ ընթերցում

Կ-811-01.04.2024-ՏՀ-011

(Լրամշակված նախագիծ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 169.33-րդ հոդված.

«Հոդված 169.33. Հարկային մարմին ներկայացվող հարկային հաշվարկում սխալ (ոչ հավաստի) տվյալներ լրացնելը, որոնք չեն առաջացրել եւ չեն կարող առաջացնել հարկի նվազեցում

1. Հարկային մարմին ներկայացվող հարկային հաշվարկում սխալ (ոչ հավաստի) տվյալներ լրացնելը, որոնք չեն առաջացրել եւ չեն կարող առաջացնել հարկի նվազեցում՝

առաջացնում է նախազգուշացում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նախազգուշացման նշանակման օրվանից հետո՝ երեսուն օրվա ընթացքում, սույն հոդվածով նախատեսված խախտումը չվերացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված տուգանքի նշանակման օրվանից հետո՝ երեսուն օրվա ընթացքում, սույն հոդվածով նախատեսված խախտումը չվերացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

4. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված պատասխանատվության միջոցները չեն կիրառվում հարկ վճարողի կողմից հարկային մարմին ներկայացված

հարկային հաշվարկում սխալ (ոչ հավաստի) տվյալներն ինքնուրույն հայտնաբերելու եւ ճշտված հաշվարկ ներկայացնելու դեպքում:»:

Հոդված 2. Օրենսգրքի 48^1-ին, 170^2-րդ եւ 170^4-րդ հոդվածներն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենսգրքի 219^1-ին հոդվածի 2-րդ պարբերությունում «4-րդ մասով» բառերը փոխարինել «1-ին մասի 4-րդ պարբերությամբ» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 234-րդ հոդվածում՝

1) «, 201.2 հոդվածներով» բառերը փոխարինել «հոդվածով» բառով,

2) «169.2» թիվը փոխարինել «169^2-րդ » թվով:

Հոդված 5. Օրենսգրքի 244^2-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 244^2. Հարկային մարմինները

1. Հարկային մարմինները քննում են սույն օրենսգրքի 41.4-րդ, 169-րդ, 169^9-րդ, 169^{10}-րդ, 169^{11}-րդ, 169^{12}-րդ, 169^{13}-րդ հոդվածներով, 169^{14}-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ պարբերություններով եւ 2-րդ մասով, 169.15-րդ, 169.33-րդ, 170^6-րդ, 170^7-րդ, 170.8-րդ, 170^{13}-րդ, 182.6-րդ հոդվածներով եւ 189-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը, 169^1-ին հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ հարկային իրավախախտումների մասով ու 158-րդ հոդվածի 11-րդ մասով, 165-րդ, 165.10-րդ, 169.18-րդ, 169.26-րդ, 169.27-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում:

2. Հարկային մարմինների անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու եւ վարչական տույժեր նշանակելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները կամ հարկային մարմնի ղեկավարի կողմից լիազորված հարկային մարմնի այլ պաշտոնատար անձը, իսկ սույն օրենսգրքի 182.6-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով՝ հարկային մարմնի ղեկավարը կամ նրա տեղակալը:»:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից երեք ամիս հետո:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

~~Առաջին~~ Երկրորդ ընթերցում

Կ-811-01.04.2024-ՏՀ-011/1

Լրամշակված նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 169.33-րդ հոդված.

«Հոդված 169.33. Հարկային մարմին ներկայացվող հարկային հաշվարկում սխալ (ոչ հավաստի) տվյալներ լրացնելը, որոնք չեն առաջացրել եւ չեն կարող առաջացնել հարկի նվազեցում

1. Հարկային մարմին ներկայացվող հարկային հաշվարկում սխալ (ոչ հավաստի) տվյալներ լրացնելը, որոնք չեն առաջացրել եւ չեն կարող առաջացնել հարկի նվազեցում՝

առաջացնում է նախազգուշացում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նախազգուշացման նշանակման օրվանից հետո՝ երեսուն օրվա ընթացքում, սույն հոդվածով նախատեսված խախտումը ~~(խախտումները)~~ չվերացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված տուգանքի նշանակման օրվանից հետո՝ երեսուն օրվա ընթացքում, սույն հոդվածով նախատեսված խախտումը ~~(խախտումները)~~ չվերացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

4. Սույն ~~հոդվածով~~ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված պատասխանատվության միջոցները ~~չի~~ չեն կիրառվում հարկ վճարողի կողմից հարկային մարմին ներկայացված հարկային հաշվարկում սխալ (ոչ հավաստի) տվյալներն ինքնուրույն հայտնաբերելու եւ ճշտված հաշվարկ ներկայացնելու դեպքում:»:

Հոդված 2. Օրենսգրքի 48^{1}-ին, 170^{2}-րդ եւ 170^{4}-րդ հոդվածներն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենսգրքի ~~219^{1}-~~ ~~-ոդ~~ 219^{1}-ին հոդվածի 2-րդ պարբերությունում «4-րդ մասով» բառերը փոխարինել «1-ին մասի 4-րդ պարբերությամբ» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 234-րդ հոդվածում՝

1) «, 201.2 հոդվածներով» բառերը փոխարինել «հոդվածով» բառով,

2) «169.2» թիվը փոխարինել «169^{2}-ոդ » թվով~~,~~

~~3) «170.3 հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ մաքսային իրավահարաբերությունների մասով,» բառերը հանել~~:

Հոդված 5. Օրենսգրքի 244^{2}-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 244^{2}. Հարկային մարմինները

1. Հարկային մարմինները քննում են սույն օրենսգրքի 41.4-ոդ, 169-ոդ, 169^{9}-ոդ, 169^{10}-ոդ-, 169^{11}-ոդ-, 169^{12}-ոդ-, 169^{13}-ոդ հոդվածներով, 169^{14}-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ պարբերություններով եւ 2-րդ մասով, 169.15-րդ, 169.33-րդ, 170^{6}-ոդ, 170^{7}-ոդ, 170.8-րդ, 170^{13}-ոդ, 182.6-րդ հոդվածներով եւ 189-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը, 169^{1}-ին հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ հարկային իրավախախտումների մասով ու 158-րդ հոդվածի ~~տասներկուերորդ~~ 11-ոդ մասով, 165-րդ, 165.10-րդ, 169.18-րդ, 169.26-րդ, 169.27-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում:

2. Հարկային մարմինների անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու եւ վարչական տույժեր նշանակելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները կամ հարկային մարմնի ղեկավարի կողմից լիազորված հարկային մարմնի այլ պաշտոնատար անձը, իսկ սույն օրենսգրքի 182.6-րդ հոդվածով

նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով՝ հարկային մարմնի ղեկավարը կամ նրա տեղակալը:»:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից երեք ամիս հետո:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-811-01.04.2024-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	1-ին հոդված	1. Նախագծի 1-ին հոդվածով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացվող նոր 169.33-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում «խախտումը (խախտումները)» բառերն անհրաժեշտ է վերանայել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ մասը, համաձայն որի՝ եթե նորմատիվ իրավական ակտում բառը նշված է եզակի թվով, ապա դա տարածվում է նաև այդ բառի հոգնակիի վրա և ընդհակառակը, եթե տվյալ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ, կամ ուղղակի այլ բան չի	Ընդունվել է:	Ընդունվել է:

			բխում այդ իրավական ակտի բովանդակությունից: Հաշվի առնելով վերոգրյալը 1-ին հոդվածով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացվող նոր 169.33-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում «(խախտումները)» բառերը առաջարկում ենք հանել: 2. Միանշանակությունն ապահովելու նպատակով՝ առաջարկում ենք 1-ին հոդվածով նախատեսվող Օրենսգրքում նոր լրացվող 169.33-րդ հոդվածի 4-րդ մասում հղում կատարել նույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերին, հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասը՝ համաձայն որի «Հղումները կատարվում են հստակ և ուղղակի:»: Հաշվի առնելով վերոգրյալը՝ 4-րդ մասում «հոդվածով» բառի փոխարեն լրացնել «հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով» բառերը, ինչպես նաև «միջոցը չի» բառերի փոխարեն լրացնել «միջոցները չեն» բառերը,:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդված «219[1]-րդ» բառն անհրաժեշտ է փոխարինել «219[1]-ին» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:

3.	ՀՀ կառավարություն	4-րդ հոդված	1.Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ կետի «169[2]» թիվն անհրաժեշտ է փոխարինել «169[2]-րդ» բառով: 2. Նախագծի 4-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվում է Օրենսգրքի 234-րդ հոդվածում «170.3 հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ մաքսային իրավահարաբերությունների մասով,» բառերը հանել: Քանի որ հիշատակված հոդվածում նման բառեր առկա չեն առաջարկում ենք վերանայել և տարընկալումից խուսափելու նպատակով նախագծի 4-րդ հոդվածի 3-րդ մասը՝ «3) «170.3 հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ մաքսային իրավահարաբերություն-ների մասով,» բառերը հանել:» բառերը հանել:	Ընդունվել է: Ընդունվել է:	Ընդունվել է: Ընդունվել է:
4.	ՀՀ կառավարություն	5-րդ հոդվածի 1-ին մաս	Առաջարկում ենք շտկել տեխնիկական վրիպակները և ախագծի 5-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենսգրքի 244[2]-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Հարկային մարմինները քննում են սույն օրենսգրքի 41.4-րդ, 169-րդ, 169[9] -րդ, 169[10]-րդ, 169[11]-րդ, 169[12]-րդ, 169[13]-րդ հոդվածներով, 169[14]-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			պարբերություններով և 2-րդ մասով, 169.15-րդ, 169.33-րդ, 170^{6}-րդ, 170^{7}-րդ, 170.8-րդ, 170^{13}-րդ, 182.6-րդ հոդվածներով և 189-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը, 169^{1}-ին հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ հարկային իրավախախտումների մասով ու 158-րդ հոդվածի 11-րդ մասով, 165-րդ, 165.10-րդ, 169.18-րդ, 169.26-րդ, 169.27-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում:»:		